ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ԿՆՔՎԱԾ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ (ՍԱՄԱՂԱՐ) ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՆՎԱԾ ԱՌԱՆՁՆԱՏԱՆ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ 3-ՐԴ ՓՈՒԼԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ
N «ԱՍՀՆ-ՄԱԾՁԲ-24/33»
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «30» 12 **2024թ.**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և «ՏԱՄՈ-ՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Մելիքյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, հիմք ընդունելով 2024 թվականի հոկտեմբերի 28-ին կնքված N «ԱՍՀՆ-ՄԱԾՁԲ-24/33» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5-րդ և 7.8-րդ կետերը և պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի 2024 թվականի դեկտեմբերի 27-ի զեկուցագիրը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ***ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ***

1.1 Ծառայության մատուցման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով՝ շինմոնտաժային աշխատանքների ամբողջական ավարտի հետ, համաձայնագրի կնքումից հետո մինչև 2025 թվականի հունվարի 24-ը ներառյալ:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն համաձայնագրի դրույթներին:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն համաձայնագիրը, համաձայնագրի հավելվածը կազմված են 1 էջից: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան, կառավարական տուն 3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ՝ 900011042356 ՀՎՀՀ՝ 01506515 Գլխավոր քարտուղար՝ _____ Ս. Մուրադյան (ստորագրություն) M.S.	«ՏԱՄՈ-ՇԻՆ» ՍՊԸ ք.Երևան, Արաբկիր 19փ, Տ. 11ա «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ Հ/Հ 2050922060071001 ՀՎՀՀ՝ 00096971 «ՏԱՄՈ-ՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն՝ ---------- Մ. Մելիքյան (ստորագրություն) L.S.